

(Transsexuality): Եթե առաջին տարբերակի պարագային կան ծինաբանական⁽¹⁰⁸⁾, կազմախօսական⁽¹⁰⁹⁾ ու հորմոնային⁽¹¹⁰⁾ որոշ յատկանիշներ, սակայն երկրորդ տարբերակի պարագային առկայ է միայն՝ հոգեկան-զգացական ազդակը, ուր սեռական երրորդ տարբերակի մը մասին, ընդհանրապես, կարելի չէ յստակօրէն խօսիլ:

Վերոյիշեալ երկու պարագաներուն ալ, խնդրոյ առարկայ անհատներ կը դիմեն բժշկական բարդ վիրահատութիւններու եւ տարբեր դեղերու, որոնց միջոցով մարմնական նպատակայարմար փոփոխութիւններու կամ սեռային յարմարումի մը հասնելու համար:

Միջսեռական կամ ործելէզ նորածիններու կամ երեխաներու մօտ, սեռային յարմարումի հասնելու որեւէ միջամտութիւն քննադատելի է: Նախ երեխան, անչափահաս ըլլալով, չի կրնար իր համաձայնութիւնը յայտնել, նմանօրինակ (վիրահատական կամ դեղերով) միջամտութիւններու պարագային: Ասոր կողքին, վերոյիշեալ միջամտութիւններէն կրնան յառաջանալ անբարենպաստ ու անսխորժ *կողմնակի ազդեցութիւններ* (Side Effects) կամ *բարդութիւններ* (Complications):

Բժշկագիտութեան մէջ, վերոյիշեալ վաղ միջամտութիւններու կամ ընդհանրապես որեւէ եղանակի միջամտութեան հարցով կան երկու՝ թեր եւ դէմ դիրքորոշումներ:

Հոգեբուժութիւնն ալ կը զբաղի նման անհատներով, որոնց մօտ շատ յաճախ հոգեկան բարդոյթներ կը յառաջանան:

Բարոյագիտական տեսանկիւնէն, ընդհանրապես, կարելի եղած չափով հարկ է պահել մարմնական ամբողջականութիւնը (Integrity): Ասոր կողքին, կարելի չէ խտրականութիւն (Discrimination) դնել սեռական բազմաթիւ տարբերակներու միջեւ:

Նկատի ունենալով *մարդու հիմնական իրաւունքները* (Human Rights) եւ *մարդու արժանապատուութիւնը* (Human Dignity), սեռական տարբերակներու պարագային, անպայման խուսափելու է «*հիւանդութիւն*», «*խանգարում*», ինչպէս նաեւ «*բնական*», «*անբնական*» կամ «*ոչ-բնական*» անուանումներէն:

Որպէս եզրակացութիւն դարձեալ շեշտելու է, որ մարդոց միջեւ առկայ՝

(108) **Ծինաբանական** (Genetics) տարբերակները.- *Էգ* (Female, 46-XX), *արու* (Male, 46-XY), *միջսեռական* (Intersex, ործելէզ), որ կրնայ ունենալ՝ 45-X (=Turner Syndrom), 47-XXY (=Klinefelter-Syndrom) եւ այլ խառն բաղադրութիւններ:

(109) **Կազմախօսական** (Anatomy) տարբերակներ.- գլխաւորաբար ծնագեղձերու (Gonad), այսինքն ձուարաններու եւ ամորձիներու յոռի կազմութիւն (Malformation) կամ բացակայութիւն (Agonadism), ինչպէս նաեւ արտաքին սեռային գործարաններու (Sex Organ) կառուծուածքային խանգարումներ:

(110) **Հորմոնային** (Hormone) տարբերակներ.- առաւելաբար սեռական հորմոններու (ինչպէս իգական Estrogen եւ արական Testosteron) խանգարումներ: